

ուժեղացնել մեր կապերը մեզ չըջապատող քիւրդ ցեղերու եւ ժողովրդեան հետ :

Մուշի մէջ գտնուող մեզ համակիր զինուորականները չկային, կառավարութիւնը անոնցմէ ոմանք աքսորած էր Երզնկա, երկուքը Եմէնի կողմերը եւն . : Վէլիտ, Նաղըմ պէյերը չկային, որով դժուարացած էր մեր կացութիւնը եւ այլեւս ճշգրիտ լուր չէինք կրնար ստանալ գորքի շարժման մասին : Միայն կը մնար պաշտօնական անձերէն Մ . Էֆ . , որմէ միայն կըրնայինք օգտուել տեղեկութիւններ քաղելու կառավարական շրջաններու անցուղարձի մասին : Ան մեզ կը յայտնէր, որ մենք ձեռք քաշենք քրդական կազմակերպութեան փափաքէն, զգուշացնելով միաժամանակ որ մեր բարեկամ քրդերը կռավարութեան մարդիկն են : Ժամանակին այս նախազգացումը նկատեցինք չափազանցուած, բացատրեցինք անով որ Մ . Էֆ .

իրը պաշտօնեայ իր շահերուն դէմ կը տեսնէ հայ-քիւրդ միասնական շարժումը :

Թէեւ չափազանցութիւն կար Մ . Էֆ . ի ըսածներուն մէջ, բայց խոշոր չափով իրականութիւն ալ կար, զոր պիտի տեսնենք յետոյ : Ան զգուշացուցած էր ի մասնաւորի Ղասըմ պէյի մասին . բայց կապերը կտրել Ղասըմի հետ պիտի նշանակէր վտանգել մեր ամբողջ դործը Չուխուրի, Խուլթի շրջաններուն մէջ, կտրուիլ Վասպուրականէն եւ Տարօնի մէջ ալ խիստ դժուարացնել մեր կացութիւնը : Ինչ ալ որ ըլլար, պէտք էր մեր կապերը պահել, մասնաւոր որ Ղասըմ բէկը Նոր Բէկ անուան տակ Դաշնակցական կոմիտէի անդամ էր Օւլասիսի շրջանին մէջ : Պէտք էր այնպէս ընել, որ Ղասըմը բոլորովին անվստահելի դառնար կառավարութեան աչքին եւ կամայ ակամայ բոլորովին կապուէր մեզ հետ :

(Շարունակելի)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՁԱՏԱԳՈՎԸ

Յ. ՇԱՀԱՄԻՐԵԱՆ («ՈՐՈԳԱՅԹ ՓԱՌԱՑ»)

Գրեց՝ ԻՐԱԶԵԿ

Բ .

«Որոգայթ Փառաց»ի երկրորդ մասը կամ Բ . հատորը, ինչպէս ասացինք, մի հաւաքածու է զանազան օրէնքների նախագծերի եւ պաշտօնական դրութիւնների նմուշների, որ հեղինակն առաջադրում է, որպէս ուղեցոյց, ապագայ ազատ Հայաստանում գործածութեան համար : «Օրինակ-կանոններ Հայաստան աշխարհի կառավարութեան համար» կամ եթէ իր աղաւաղուած գրաբարով ասենք՝ «նշաւակ կարգադրութիւն հայոց վասն կառավարութեան Հայաստանեաց յաշխարհի», — այսպէս է խորագրում հեղինակը իր գրքի այս մասը :

Ամբողջ հատորը բաղկացած է 521 գլխից կամ յօդուածից, որոնցից 50 յօդուածը պաշ-

տօնական թղթերի օրինակներ են — որոնց մէջ երգման, բարձր պաշտօնեաների հաստատութեան թղթերից մինչեւ «հարսանեաց դաշնադրութեան», մուրհակի, հրաւերների օրինակները . 3 յօդուածը ապագայ ազատ Հայաստանի ելքի, մուտքի եւ հաշուեկշռի տախտակներն են, իսկ մնացած 468 յօդուածը՝ զանազան օրինագծեր :

Աւելորդ կը լինէր որեւէ համակարգութիւն կամ հետեւողականութիւն որոնել այս բաւական ստուար հատորի մէջ : Ոչ միայն յօդուածների, այլ յաճախ նաեւ մտքերի մի խառնաշրջիտութիւն է, որին դուք հանդիպում էք գրքի մէկ ծայրից մինչեւ միւրը :

Իրաւ է, հեղինակը երբեմն փորձել է նոյն նիւթին վերաբերող յօդուածներն ի մի համախմբել եւ իրար յետեւից դասաւորել . օրինակ,